† Տ. ԱԴԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ

Տարեոյր օգոստոսի 28-ին Արգեազու ս. Խաչ վանքում իւր մահկանացուն կնքեց անակնկալ պատահարի ենթարկուելով (պատի փլուածքի տակ ընկնելով) նոյն վանքի վանահայր Տ. Ադամ վրդ. Արզումանեանը։

Ծնուած է 1859 թուին, երկար ժամանակ ծառայել է Ս. Էջմիածնում, վեղար է ստացել 1890 թ. եղել է վանահայր ս. Հռիփսիմէի վանքում, ապա նշանակուել է Արգեազի Ս. Խաչի վանահայր, ուր և մնացել է մինչև իւր վախճանը։

Տէրը լուսաւորէ հանգուցեալի հոգին։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Մոսկուայում հոկտեմբերի 10-ին բացուել է Մոսկուայի թեմի հոգևորականութեան ժողովը։

* * *

Վրաստանի էկզարխը Սինոդին միջնորդել է աւելացնելու Կովկասի հոգևորականութեան ռոճիկը։

* * *

Սինոդին կից դպրոցական յանձնաժողովը մշակել է մի շարք միջոցներ կրօնի դասաւանդումը կանոնաւորելու միջնակարգ դպրոցներում։ Հոգևոր ճեմարաններում աւանդուելու են կրօնի մեթոդիկա և լինելու են գործնական պարապմունքներ։ Կրօնի դասաւանդման հարցը կանոնաւորելու համար ընտրուեց յանձնաժողով յայտնի մանկավարժ Լասխոտսկի աւ. քահանայի նախագահութեամբ։

* * *

Մակարի մետրոպոլիտը միջնորդութիւն է յարուցել ներքին գործոց նախարարութեան առաջ, որ քաղաքային նոր կանոնադրութեան մէջ ուղղում լինի այն մասին, որ հոգևորականներն էլ կարողանան օգտուել ընտրական իրաւունքից։

* * *

Սինոդի ամեռային նստաշրջանին աշխարհիկ հոգևորականութիւնից պէտք է մասնակցեն երեք աւագ երէց, մինչև այժմ նման դէպք չի եղել։ Բացի զինուորական իշխանութեան աւագ երէցից պէտք է նշանակուի նաև Նոցին Մեծութեանց պալատական աւագ երէց Վասիլևը։

Սինոդի նիստերից ազատ է կացուցուելու Սինոդին կից ուսումնարանական յանձնաժողովի նախագահ Սերգէյ արքեպիսկոպոսը, որը 10 տարի անընդհատ մասնակցում էր նիստերին։

* * *

Սինոդը կարգադրել է, որ քահանաները արձակուրդ ստացած զինուորներին և զինուորական պարտաւորութիւն ունեցող բանուորներին չպսակեն։

* * *

Սինոդը շուտով քննութեան կառնէ թեմական կառավարութեան բարեփոխութեան հարցը. կոնսիստորիաների տեղ պէտք է լինին թեմական կառավարութիւններ և դատարան։ Դատարանի անդամներին նշանակելու է Սինոդը. թեմակալը ունենալու է խորհուրդ, որի անդամները լինելու են թեմի զանազան վարչութիւնների գլուխ կանգնած անձինք։

* * *

Կրասնոյարի և Ենիսէյի եպիսկոպոս Պետական Դումայի անդամ Նիկոնը իր իշխանութեամբ թոյլատրեց ծխականներին քահանաներ ընտրել, ձայնի իրաւունքով օգտուում են նաև կանայք 21 տ. հասակի։ Նիկոն եպիսկոպոսից բացատրութիւն են պահանջում այս հարցի մասին, թէ ընտրական սկզբունքն ինչպէս է ազդել ծխի կեանքի վրայ։

* * *

Սինոդը ի նկատի ունենալով, որ Բուկովինան ունի իւր անկախ հոգևորական կառավարութիւնը, Տրապիզոնի շրջանն էլ կառավարում է միտրոպոլիտ Արիսանթոսը, որը ենթակայ է Պոլսի պատրիարքին, որոշեց այդ շրջանների եկեղեցական վարչութիւնները չփոխել, միայն աստուածպաշտութեան ժամանակ պէտք է յիշատակել ոչ նախկին իշխանաւորներին, այլ ռուսական Կայսերական Տանը։

* * *

Ինչպէս լսում է Սինոդի աւագ դատախազ Ռաևը խօսակցութիւն է ունեցել ներքին գործոց նախարարի հետ այն մասին, որ գիւղական հոգևորականութեանը մասնակից անեն գիւղերում պարենաւորման գործին։ Սինոդն ևս քննութեան կանչ հոգևորականութեան ունենալիք դերը պարենաւորման գործում։

* * *

Կենսական մթերքների սոսկալի գները ստիպել են շատ դասատուների հոգևոր տարրական դպրոցները թողնել։ Թեմական իշխանութիւնն աշխատել է ուսուցչուհիներ հրաւիրել հեռացածների փոխարէն, բայց ապարդիւն, որովհետև դասագները շատ քիչ են։ Որոշուած է սեմինարիաների բարձր դասարանների աշակերտներին ուսուցչութեան հրաւիրել։

* * *

Ներքին գործոց օտարադաւանների հոգևոր գործերի դեպարտամենտի կառավարիչ Պետրովիչը պաշտօնից հրաժարուել է, նրա տեղ նշանակուել է նոյն նախարարութեան խորհրդի անդամ իսկական պետական խորհրդական Խարլամովը։

* * *

Սինոդը հրամանագրել է բոլոր քահանայագործողների իւրաքանչիւր աստուածպաշտութիւնից յետոյ մաղթանք կատարել ռուս և դաշնակից զօրքի յաղթութեան և հոգեհանգիստ պատերազմի դաշտում ընկածների համար։

* * *

Պետրոգրադում վրացոց ներկայացուցիչները Պիտիրիմ մետրոպոլիտին ընծայարերել են մի թանգագին հովուական ցուպ, զուտ վրաց ազգային քանդակագործութեամբ։ Արծաթապատ է, թանգագին քարերով զարդարուած, գլխին արծաթէ խաչ «Բարի հովիւ» մակագրութեամբ. մի քիչ ցած վրացերէն և ռուսերէն լեզուներով գրուած է «Իվերիայի եկեղեցու պաշտպանին և հովանաւորին Դերապատիւ Պիտիրիմ միտրոպոլիտին Վրաստանի երախտապարտ և սիրող որդիներից»։

Ցուպը մատուցանողը եղել է իշխան Աբխազին. Պետական Խորհրդի նորընտիր անդամը. նրա հետ եղել են 14 այլ ներկայացուցիչներ։

Պիտիրիմ մետրոպոլիտը շնորհակալութիւն է յայտնել և աւելացրել է, թէ իր անկեղծ ձգտումն է ընդառաջ գնալ Իվերիայի եկեղեցու իսկական շահերին, բայց շատ բան իրենից չէ կախուած. բայց յուսալ պէտք է լաւ ապագայի և աշխատել։

* * *

Սինոդը որոշել է եկեղեցական և վանքական աղատ գումարներով դնել զինուորական փոխառութեան արժէթղթեր։

***

Կիևի շրջանի հոգևորականութեան յայտարարուած է, որ պէտք է այդ շրջանում տեղաւորուեն 15,000 գաղթական ռումիններ։ Կոնսիստորիաները պէտք է հոգևորականներին պատուիրեն, որ ժողովրդին յորդորեն գաղթականներին եղբայրական օգնութեան հասնեն՝ սնունդ ու ապաստարան մատակարարելով։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Նոյեմբերի 1-ին (Ն. տ.) կաթոլիկ եկեղեցին կատարում է «Ամենայն սրբոց» տօնը։ Փարիզում այդ օրը գնում են գերեզմատուն և իրենց մերձաւորների գերեզմանների վրայ ծաղիկներ, պսակներ են դնում։

Այս պատերազմի սկզբից այդ օրը ազգային բնաւորութիւն է ստացել։ Գնում են պատերազմում ընկած զինուորների գերեզմանների վրայ պսակ դնելու և քաղաքացիք և պաշտօնական անձինք։

Այս տարի գերեզմանատուն գնացողների թիւը շատ մեծ է եղել։ Հանրապետութեան Նախագահն էլ այցելել է պատերազմում ընկած զինուորների գերեզմանները և պսակներ դրել։

Այդ օրը գերեզմանատուն է գնացել 746,000 մարդ։ Մերձաւոր թիկունքի զինուորներն ևս այդ օրը իրենց ընկերների յիշատակին հոգեհանդիստ, պատարագ են անել տուել բոլոր դաւանութիւնների ծէսերի համաձայն. դրուել են պսակներ։

***

Հռոմում ապրող մի քանի աղդեցիկ լեհեր պաշտօնապէս դիմել են պապին և բողոքել, որ Գերմանիան Լեհաստանի անկախութիւնը հրատարակելով լեհական զօրաժողով է անում։ Պընդողներ կան, որ Վատիկանը վճռել է չճանաչել Լեհական նոր թագաւորութիւնը։

***

Լեհաստանի կաթոլիկ հոգևորականութիւնը ուժեղ դիմադրութիւն է ցոյց տալիս գերմանացիների գրաւած ու անկախ յայտարարած լեհական գաւառներից զօրք ժողովելուն։ Վարշաւայի արքեպիսկոպոսը խիստ դատապարտում է գերմանացոց ծրագիրը։